ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 3-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2016.02.15/4(547) Հոդ.49	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Ֆինանսների նախարար	*Ընդունման ամսաթիվը*	08.01.2016
Ստորագրող մարմինը	Ժամանակավոր պաշտոնակատար	*Ստորագրման ամսաթիվը*	08.01.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	25.02.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
29 հունվարի 2016 թ.
Պետական գրանցման թիվ 11816030

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

8 հունվարի 2016 թ. **N 3-Ն**

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 20.07.21 N 380-Ն)

Հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը՝

(նախաբանը խմբ. 20.07.21 N 380-Ն)

Հրամայում եմ՝

1. Հաստատել հանրային հատվածի կազմակերպություններում՝

1) նոր հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները՝ համաձայն հավելված 1-ի.

2) սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին հավելվածով հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման համար սահմանված նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները չեն տարածվում ռազմական տեխնիկայի և փոքրարժեք կամ արագամաշ առարկաների վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ժամանակավոր պաշտոնակատար՝ **Պ. Սաֆարյան**

Հավելված 1
ՀՀ ֆինանսների նախարարի
2016 թ. հունվարի 8-ի
թիվ 3-Ն հրամանի

Ն Ո Ր Մ Ա Տ Ի Վ Ա Յ Ի Ն Օ Գ Տ Ա Կ Ա Ր Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ա Ն Ժ Ա Մ Կ Ե Տ Ն Ե Ր

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

(վերնագիրը փոփ. 20.07.21 N 380-Ն)

Դաս	Խումբ	Տեսակ		Օգտակար ծառայության ժամկետ (տարի)
1			**Շենքեր**	
	10		**Շենքեր՝ երկաթբետոնյա և մետաղական հիմնակմախքով**	
		100	Բարձրահարկ շենքեր (5 հարկից բարձր), երկաթբետոնյա և մետաղական հիմնակմախքով, պատերը՝ քարից, խոշոր բլոկներից և պանելից՝ ծածկապատված երկաթբետոնյա, մետաղական և ուրիշ այլ երկարակյաց պաշտպանիչ պատվածքով (ծածկույթով)	100
		101	Մեկ հարկանի և բազմահարկ՝ մինչև 5 հարկանի երկաթբետոնյա և մետաղական հիմնակմախքով շենքեր, պատերը՝ քարից, խոշոր բլոկներից և պանելից՝ ծածկապատված երկաթբետոնյա, մետաղական և ուրիշ այլ երկարակյաց պաշտպանիչ պատվածքով (ծածկույթով)	120
		102	Երկաթբետոնյա և մետաղական հիմնակմախքով այլ շենքեր	80
	11		**Շենքեր՝ առանց երկաթբետոնյա և մետաղական հիմնակմախքի**	
		110	Առանց երկաթբետոնյա և մետաղական հիմնակմախքի շենքեր՝ թեթև քարե շարվածքի պատերով, երկաթբետոնյա, աղյուսե և փայտե հենասյուներով, երկաթբետոնյա ծածկով և ծածկույթով	80
		111	Առանց երկաթբետոնյա և մետաղական հիմնակմախքի այլ շենքեր	60

2			**Շինություններ (կառույցներ)**	
	20		**Հիդրոտեխնիկական շինություններ/կառույցներ**	
		200	Ամբարտակներ, թունելներ, պաշտպանիչ կառույցներ, դրենաժներ, ջրթողներ և ջրընդունիչներ, պարզարաններ, ձկնաթող և ձկնապաշտպան կառույցներ, ճնշումային խողովակաշարեր, ջրամբարներ, ջրանցքներ և համանման այլ հիդրոտեխնիկական կառույցներ	100
		201	Երկաթբետոնյա, բետոնյա և քարե ափաամրացման և ափապաշտպան կառույցներ	30
		202	Գետերի փայտե կառամատույցների կառույցներ	25
		203	Արհեստական լճերի բետոնյա և երկաթբետոնյա ջրհեռներ և ջրթողեր	50
		204	Հիդրոտեխնիկական ներտնտեսական պողպատյա, երկաթբետոնյա, բետոնյա և քարե կառույցներ ջրանցքներ վրա	40
		205	Ոռոգման ցանցի ջրանցքներ, ջրհավաք-ջրթող ցանց՝ հողային բաց ջրանցքով, կոլեկտորա-դրենաժային հողային ջրանցքներ՝ առանց ամրացման, ոռոգման ցանցի ասբոցեմենտե, պողպատե և պոլիէթիլենային խողովակներով ջրանցքներ, այլ ոռոգման համակարգեր (ներառյալ՝ լճացման եղանակով ոռոգման համակարգեր)	50
		206	Ոռոգման ցանցի ջրանցքներ՝ երկաթբետոնյա վաքերով	25
		207	Փակ կոլեկտորա-դրենաժային ցանցի ասբոցեմենտե, պողպատե և պոլիէթիլենային խողովակներով ջրանցքներ	40
		209	Այլ հիդրոտեխնիկական կառույցներ (ներառյալ՝ կարգավորված գետեր, ջրընդունիչներ, բաց աղբյուրների համար ջրընդունիչ կառույցներ և ջրանցքներ, կառամատույցների և ափաամրացման կառույցներ, պոլիէթիլենային դրենաժներ, մետաղական և փայտյա պաշտպանիչ կառույցներ և այլն)	50
	21-23		**Տրանսպորտի և կապի բնագավառի շինություններ**	
		210	Բոլոր տեսակի և կոնստրուկցիայի երկաթբետոնյա, բետոնյա և քարե կամուրջներ (այդ թվում՝ հետիոտնային կամուրջներ և թունելներ), ինչպես նաև հիդրոտեխնիկական շինություններ չհանդիսացող երկաթբետոնյա, բետոնյա, քարե և թուջե խողովակներ և վաքեր	100

		211	Կամուրջներ մետաղական, խողովակներ պողպատե ծալքավորված	60
		212	Կամուրջներ փայտե և մետաղական՝ փայտե հենակների վրա, երկաթգծի փայտե կառամատույց, երկաթուղային գծերի վերին մասի կառույցներ (ռելսեր՝ ամրակապերով, կոպճավազ, փայտակոճեր, երկաթբետոնյա կոճեր, սլաքային փոխանցումներ և այլ նմանատիպ հատվածներ), մետրոպոլիտենի երկաթուղային գծեր	30
		213	Երկաթգծի երկաթբետոնյա կառամատույցներ՝ քարե ծածկով, երկաթգծի հողային շերտ (պաստառ)	100
		214	Երկաթգծի կառամատույցներ և բաց բեռնային հրապարակներ, շրջադարձային շրջաններ	50
		215	Երկաթգծի թունելներ՝ բոլոր կոնստրուկցիաների, ներառյալ՝ մետրոպոլիտենի կայարաններ, մետրոպոլիտենի թունելներ	200
		216	Բացառիկ (եզակի) ռադիոհեռուստատեսային աշտարակներ	120
		217	Ռադիոաշտարակներ, կայմայուն-ալեհավաքներ	60
		218	Ցեմենտաբետոնյա ավտոտրանսպորտային ճանապարհներ, հրապարակների և աերոդրոմների ցեմենտաբետոնյա ծածկույթներ,	50
		219	Կախովի ճանապարհներ, գրունտային թռիչքադաշտեր	40
		220	Թռիչքային-վայրէջքային գոտիներ	25
		221	Թռիչքային ուղիներ, ինքնաթիռի կայանատեղեր, կառամատույցներին և անգարին կից հրապարակներ	30
		222	Ասֆալտբետոնյա ավտոտրանսպորտային ճանապարհներ, հրապարակների և աերոդրոմների ասֆալտբետոնյա ծածկույթներ	40
		223	Երկաթգծի հողային ծածկի քարե, բետոնյա և երկաթբետոնյա դրենաժներ, ջրհեռներ և ամրացնող կառույցներ, երկաթբետոնյա մշտական ձյունապաշտպան ցանկապատեր	40
		224	Երկաթգծի հողային ծածկի փայտե և հողային դրենաժներ, ջրհեռներ և ամրացնող կառույցներ	25

		225	Քարե, բետոնյա, և երկաթբետոնյա պաշտպանիչ կառույցներ (հակասողանքի, հակափլուզման, հենապատային, ցեխահեղեղատարներ, խրամուղիներ և այլ նմանատիպ կառույցներ), կամրջի ամրացնող կառույցներ	50
		226	Երկաթբետոնյա ռեզերվուարներ դիզելային վառելիքի և քսայուղերի պահպանման համար	50
		227	Մետաղյա ռեզերվուարներ դիզելային վառելիքի և քսայուղերի պահպանման համար	40
		228	Նավթամթերքների պահպանման համար ռեզերվուարներ	20
		229	Ստորգետնյա և վերգետնյա գազի ռեզերվուարներ	50
		239	Տրանսպորտի և կապի բնագավառի այլ շինություններ և կառույցներ (այդ թվում՝ կռունկի երկաթուղային հենագծեր, կազմակերպությունների երկաթուղային ներքին գծեր, էստակադայի հենապյուներ, քարե, բետոնյա և երկաթբետոնյա էստակադաներ, ջրապյուներ, բետոնյա և ասբոցեմենտե հեռախոսային կոյուղիներ և այլն)	50
	24-25		**Այլ շինություններ/կառույցներ**	
		240	Տիղմի հավաքման/կուտակման հրապարակ՝ բնական հիմքով	10
		241	Տիղմի հավաքման/կուտակման հրապարակ՝ արհեստական հիմքով	20
		242	Արտեզյան հորատանցքեր	30
		243	Ջրմուղի և կոյուղու պողպատյա դյուկերներ (խցիկներով)	30
		244	Ջրմուղկոյուղու և ոռոգման համակարգի այլ շինություններ/կառույցներ (ներառյալ՝ կոյուղային արտաթողում (ափային), ջրմուղի մաքրման կառույցների համալիրներ (շաղախման և լուծման բաքեր, խառնիչներ, ռեակցիայի խուցեր, պարզարաններ, զտիչներ և այլն), երկաթբետոնյա կառույցներ աերացիայի համար, կոյուղային պոմպակայաններ, մաքուր ջրի ստորգետնյա երկաթբետոնյա ջրամբարներ, ջրմուղ աշտարակներ, երկաթբետոնյա հորեր և այլ նմանատիպ շինություններ/կառույցներ)	50
		245	Քարե և երկաթբետոնյա ծխատար խողովակներ	50
		246	Մետաղյա ծխատար խողովակներ	30

		247	Ավտոլիցքավորման կայաններ	30
		248	Քարե և մետաղյա ցանկապատեր	50
		249	Մշակույթի, հանգստի պուրակների և կենդանաբանական այգիների շինություններ (ներառյալ՝ շատրվաններ, ջրավազաններ և այլ նմանատիպ շինություններ/կառույցներ)	40
		250	Մշակույթի, հանգստի պուրակների և կենդանաբանական այգիների այլ շինություններ և կառույցներ (ներառյալ՝ կանաչ թատրոններ, բեմահարթակներ, երաժշտական խեցաբեմեր, պարահրապարակներ, ընթերցասրահներ, տաղավարներ, բոլոր տեսակի ատրակցիոններ, դեկորատիվ ծաղկամաններ, քանդակներ և աղբամաններ, հրապարակներ, ստենդներ և այլ նմանատիպ շինություններ/կառույցներ)	20
		251	Սպորտային կառույցներ (ներառյալ՝ ստադիոնների երկաթբետոնյա և քարե տրիբունաներ, քարե և մետաղյա կիսափակ նետաձգարաններ, հրաձգարաններ, փորձատեղեր և ապաստարաններ, այլ նմանատիպ կառույցներ)	50
		252	Սպորտային այլ կառույցներ (ներառյալ՝ ստադիոնների փայտյա տրիբունաներ, սպորտային կառույցների սինթետիկ կամ հատուկ խառնուրդից և գազոնային ծածկեր, հատակներ և հրապարակներ, այլ նմանատիպ կառույցներ)	15
		253	Մետաղյա և փայտյա կոնստրուկցիայով տնակներ	20
		259	Այլ շինություններ/կառույցներ (ներառյալ՝ ավտոտնակներ, պահակակետի տնակներ, սպորտային կառույցների ռետինե բիտումային ծածկեր, հատակներ և հրապարակներ, այլ նմանատիպ կառույցներ և այլն)	30
3			**Փոխանցող հարմարանքներ**	
	30		**Կապի և էլեկտրահաղորդման փոխանցող հարմարանքներ**	
		300	Երկաթգծի (ներառյալ՝ մետրոպոլիտենի) և տրոլեյբուսային կոնտակտային ցանցեր՝ մետաղական և երկաթբետոնյա հենասյուների վրա	50
		301	Օդային էլեկտրոհաղորդագծեր 0.4-ից մինչև 20կՎ լարման	50

		302	Էլեկտրոհաղորդման մալուխագծեր մինչև 10կՎ լարվածության պոլիէթիլենային թաղանթով՝ ստորգետնյա լարանցմամբ, ինչպես նաև տարածքներում	20
		303	Կապի օպտիկա մանրաթելային, ինչպես նաև մետաղական թաղանթով մալուխային ցանցեր	50
		304	Հենապյուներից կախված և շենքերի պատերին մոնտաժված կապի այլ մալուխային ցանցեր	25
	31		**Խողովակաշարեր**	
		310	Կոյուղային ցանցեր՝ կերամիկական, ասբոցեմենտե և թուջե (կոլեկտորներ և փողոցային ցանցեր դիտահորերով և արմատուրաներով)	50
		311	Կոյուղային ցանցեր՝ երկաթբետոնյա, բետոնյա, աղյուսե և պողպատյա (կոլեկտորներ և փողոցային ցանցեր դիտահորերի և արմատուրաների հետ)	30
		312	Պոլիէթիլենային ջրամատակարարման ցանցեր (դիտահորերի, ջրապյուների, ջրածորանների (հիդրանտների) և այլ սարքավորումների հետ)	100
		313	Թուջե ջրամատակարարման ցանցեր (դիտահորերի, ջրապյուների, ջրածորանների (հիդրանտների) և այլ սարքավորումների հետ)	60
		314	Երկաթբետոնյա ջրամատակարարման ցանցեր (դիտահորերի, ջրապյուների, ջրածորանների (հիդրանտների) և այլ սարքավորումների հետ)	30
		315	Պողպատյա և ասբոցեմենտե ջրամատակարարման ցանցեր (դիտահորերի, ջրապյուների, ջրածորանների (հիդրանտների) և այլ սարքավորումների հետ)	20
		316	Պոլիէթիլենային տիղմատար ցանցեր	100
		317	Թուջե տիղմատար ցանցեր	60
		318	Պողպատյա տիղմատար ցանցեր	30
		319	Ասբոցեմենտե տիղմատար ցանցեր	20
	32		**Այլ փոխանցող հարմարանքներ**	

		329	Այլ փոխանցող հարմարանքներ	20
4			**Մեքենաներ և սարքավորումներ**	
	40		**Ուժային մեքենաներ և սարքավորումներ**	
		400	Ջերմատեխնիկական սարքավորումներ (ներառյալ՝ կաթսայատան կայանքներ և գոլորշի արտադրող ամրակայված կաթսաներ (բոյլերներ)	30
		401	Էլեկտրաշարժիչներ և դիզելային գեներատորներ, վագոն-էլեկտրակայաններ	20
		402	Համալիր կայանքներ (ներառյալ՝ էլեկտրական շարժական գեներատորներ, շարժական էլեկտրակայաններ, ցածր հզորության երկաթուղային էլեկտրակայաններ (մինչև 9 կՎտ), տրանսպորտային կցասայլերի վրա տեղակայված դիզելային էլեկտրակայաններ, ինչպես նաև շարժական կաթսայատներ)	10
		403	Գյուղատնտեսական նշանակության տրակտորներ (ներառյալ՝ ընդհանուր և հատուկ նշանակության անվավոր և թրթուրավոր տրակտորներ, ունիվերսալ սերմնացան անվավոր տրակտորներ, անտառային տնտեսության մեքենաներ և այլն), արդյունաբերական նշանակության տրակտորներ (ներառյալ՝ բուլդոզերներ, էքսկավատորներ և այլն)	15
		404	Տրանսպորտային միջոցների մարտկոցներ	3
		409	Այլ ուժային սարքավորումներ	10
	41-42		**Աշխատանքային մեքենաներ և սարքավորումներ**	
		410	Կոմպրեսորային մեքենաներ և սարքավորումներ	10
		411	Արտեզյան, օդաճնշման պտուտակավոր և խորքային պոմպեր, շարժիչային պոմպեր	8
		412	Այլ պոմպեր (ներառյալ՝ կենտրոնախույս, առանցքային, պերիֆերիկ, անկյունագծային (ջրային, կոյուղու) պոմպեր, վակուումային պոմպեր և դրանց հիման վրա ագրեգատներ, վակուումային համակարգեր)	10
		413	Օդափոխման համակարգեր (այդ թվում՝ հովհարներ, օդորակիչներ, ջեռուցիչներ, օդային կոլեկտորներ, օդատարներ, խոնավացման խցեր)	12

		414	Կամրջակային (հատուկ) ամբարձիչներ՝ ավելի քան 15 տոննա բեռնաբարձման հզորությամբ, երկաթուղային քայլքով ամբարձիչներ այլ նմանատիպ ամբարձիչներ	20
		415	Տրանսպորտային միջոցների բեռնման և բեռնաթափման մեքենաներ/բեռնիչներ, ավտոբեռնիչներ, առաջնաշերեփային թրթուրավոր և պնևմատիկ անիվավոր բեռնիչներ՝ ավելի քան 10 տոննա բեռնաբարձման հզորությամբ	10
		416	Երկրաբանահետախուզական սարքավորումներ	10
		417	Երկաթուղային տրանսպորտի մեքենաներ և սարքավորումներ (ներառյալ՝ շարժակազմի վերանորոգման մասնագիտացված սարքավորումներ, տեղակայանքներ և ստենդներ, վագոնների վերհանման և դրանց հանգույցների փոխարինման մեխանիզմներ, վագոնների ներկման և չորացման մեքենաներ, վագոնների էլեկտրական սարքավորումների վերանորոգման համար օգտագործվող մեքենաներ, շարժակազմի և դրա բաղադրիչների լվացման համար օգտագործվող ջրցան մեքենաներ, վագոնների տեխնիկական զննման տեղամասերի սարքավորումներ, երկաթուղային գծերի եռակցման շարժական ագրեգատներ, եռակցման ենթակա հանգույցների ջերմային մշակման սարքավորումներ, կտրող հաստոցներ, երկաթուղային գծերը փոխելու ազդանշանային կամրջակներ և այլն)	10
		418	Երկաթուղային տրանսպորտի այլ մեքենաներ և սարքավորումներ (ներառյալ՝ վագոնները փոխադրումներին նախապատրաստող մեքենաներ, արգելակման համակարգերի կենտրոնացված փորձարկման սարքավորումներ, շարժակազմի լվացման համար օգտագործվող սարքավորումներ, արգելակների վերահսկման կայանների սարքավորումներ, վագոնների հավաքման համար օգտագործվող սարքավորումներ, երկաթուղային հանգույցների և փայտակոճերի քանդման և հավաքման մեքենաներ և արտադրական գծեր, երկաթուղային գծերի եռակցման ստացիոնար մեքենաներ, երկաթգծի հանգույցների փորձարկման հիդրավլիկ մամլիչներ, կշեռքների, բեռնող-բեռնաթափող մեքենաների և երկաթուղային տրանսպորտի այլ սարքերի և սարքավորումների վերանորոգման վագոն-կայաններ և այլն)	20
		419	Չափիչ և կարգավորիչ սարքեր և լաբորատոր սարքավորումներ (ներառյալ՝ լաբորատոր կշեռքներ, հարթակային կշեռքներ ավտոմոբիլային, երկաթուղային/վագոնային, ձեռնասայլակային և այլ նմանատիպ տրանսպորտային կշեռքներ, հատուկ տեխնոլոգիական կշեռքներ, բոլոր տեսակի խրոնոմետրեր, վայրկյանացույցներ և այլն)	10

		420	Սպորտային սարքավորումներ և հարմարանքներ (ներառյալ՝ չափիչ և վերահսկիչ սարքեր, մրցավարական աշտարակներ և խցիկներ, պատվո հարթակներ, մարմնամարզական հարթակներ, դարպասներ՝ ցանցով, ցանկապատման ցանցեր, բասկետբոլի վահանակներ, մրցավարական և մարզչական սեղաններ, սեղանի թենիսի սեղաններ և այլն)	10
		421	Սպորտային առագաստանավեր և թիավարական նավեր	15
		422	Կենսաբժշկական սարքավորումներ և բժշկական հսկողության սարքավորումներ տարբեր մարզաձևերում	12
		423	Սպորտային այլ սարքավորումներ և հարմարանքներ (ներառյալ՝ ատլետիկայի, մարմնամարզության, բռնցքամարտի, ըմբշամարտի, ծանրամարտի և այլ մարզաձևերի համար հարմարանքներ և սարքավորումներ, սպորտային գորգեր, մրցավարական ազդանշանային և տեղեկատվական գործիքներ/հարմարանքներ, մարզահրապարակների և խաղահրապարակների նշագրումների մեքենաներ և այլն)	8
		424	Թատրոնների և մշակութային այլ կենտրոնների մասնագիտացված սարքավորումներ (ներառյալ՝ բեմերի, հարթակների և էստրադաների մեխանիկական սարքավորումներ, մեխանիկական և էլեկտրոնային կառավարմամբ էլեկտրակարգավորող սարքավորումներ, թատրոնների էլեկտրական լուսավորման սարքավորումներ, երաժշտական գործիքներ և այլն)	15
		425	Այլ աշխատանքային մեքենաներ և սարքավորումներ (ներառյալ՝ գազօջախներ, էլեկտրական սալօջախներ, լվացքի մեքենաներ, կարի մեքենաներ, արդուկներ, էլեկտրական սղոցներ, բենզասղոցներ, էլեկտրական հնձիչներ, տեսախցիկներ, ֆոտոխցիկներ, տեղորոշիչ սարքեր (GPS), հսկիչ դրամարկղային մեքենաներ և այլն)	12
	43		**Այլ մեքենաներ և սարքավորումներ**	
		439	Այլ մեքենաներ և սարքավորումներ	10
5			**Տրանսպորտային միջոցներ**	
	50		**Բեռնատար ավտոմեքենաներ, կցորդիչներ և կիսակցորդիչներ**	
		500	Մինչև 2 տոննա բեռնաբարձման հզորությամբ ավտոմեքենաներ	8
		501	2 տոննայից ավելի բեռնաբարձման հզորությամբ ավտոմեքենաներ, կցորդիչներ, կիսակցորդիչներ և հատուկ քարշակային բեռնատարներ	10

	51		**Մարդատար ավտոմեքենաներ և ավտոբուսներ**	
		510	Մարդատար ավտոմեքենաներ	10
		511	Ավտոբուսներ	15
	52		**Հատուկ տրանսպորտային միջոցներ**	
		520	Բեռնատարների հենասարքի (շասսիի) վրա հատուկ տրանսպորտային միջոցներ (սանիտարական, տեխնոլոգիական, անասնաբուժական, հրշեջ, վթարային, արհեստանոցներ և այլն)	12
		521	Մարդատար ավտոմեքենաների և ավտոբուսների հենասարքի (շասսիի) վրա հատուկ տրանսպորտային միջոցներ (սանիտարական, տեխնոլոգիական, անասնաբուժական, հրշեջ, վթարային, արհեստանոցներ, և այլն)	8
		529	Այլ հատուկ տրանսպորտային միջոցներ	10
	53		**Օդային տրանսպորտային միջոցներ**	
		530	Օդանավեր	25
		531	Ուղղաթիռներ	15
	54		**Այլ տրանսպորտային միջոցներ**	
		549	Այլ տրանսպորտային միջոցներ	8
6			**Գրասենյակային և տնտեսական գույք և պարագաներ, գործիքներ**	
	61		**Համակարգչային սարքավորումներ/տեխնիկա**	
		610	Համակարգիչներ (ներառյալ՝ սեղանի (ստատիկ) համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ (լափթոփներ, նոութբուքեր). գրպանի ՊԴԱ (PDA) համակարգիչներ և համանման այլ համակարգչային սարքավորումներ)	5

		611	Համակարգչային սարքավորումներ և տեխնիկա (ներառյալ՝ մոնիտորներ և պրոյեկտորներ, օգտագործվող բացառապես տվյալների ավտոմատ մշակման համակարգերում, հիշող սարքեր, կիսահաղորդչային հիշող սարքեր, ապահովող տեղեկատվության պահպանումը հոսանքի անջատման դեպքում, տպիչ, համակարգչին կամ համակարգչային ցանցին միանալու հնարավորություն ունեցող պատճենահանող և ֆաքսիմիլային սարքեր՝ միավորված կամ չմիավորված և այլն)	7
		619	Այլ համակարգչային սարքավորումներ և տեխնիկա	8
	62		**Գրասենյակային և տնտեսական գույք**	
		620	Կահույք (ներառյալ՝ գրասեղաններ, սեղաններ, աթոռներ, բազկաթոռներ, փափուկ կահույք, մահճակալներ, զգեստապահարաններ, զգեստապահարանի կախիչներ, գրապահարաններ, գրադարակներ, չհրկիզվող պահարաններ և այլն), գորգեր, հայելիներ	10
		621	Հեռախոսներ (այդ թվում՝ բջջային), ռադիոհաղորդակցման սարքեր	5
		622	Գրասենյակային էլեկտրական տեխնիկա (ներառյալ՝ հեռուստացույցներ, սառնարաններ, խմելու ջրի սարքեր, սրճեփներ, թեյնիկներ, օդորակիչներ, հովհարներ, տաքացուցիչներ, փոշեկուլներ, լվացքի մեքենաներ, թղթի մանրացման և կտրման սարքեր, գազօջախներ, էլեկտրական սալօջախներ, լվացքի մեքենաներ, կարի մեքենաներ, արդուկներ, տեսախցիկներ, ֆոտոխցիկներ, տեղորոշիչ սարքեր (GPS), հսկիչ դրամարկղային մեքենաներ և այլն)	8
		623	Ուղեգորգեր, դռների և պատուհանների կտորե վարագույրներ	5
		624	Շրջանակով նկարներ, գրասենյակային բնույթի դեկորատիվ ծաղկամաններ և համանման այլ դեկորատիվ պարագաներ	50
		625	Մետաղյա և քարե քանդակներ	100
		629	Այլ գրասենյակային և տնտեսական գույք (ներառյալ՝ քարտադարաններ, շերտավարագույրներ, ամբիոններ, ստենդներ, թարգմանչական վահանակներ, ջահեր, հեռադիտակներ, լուսամփոփներ և այլն)	8
7			**Այլ հիմնական միջոցներ**	
		700	Բանող կենդանիներ, կրկեսների և կենդանաբանական այգիների կենդանիներ	10

		701	Որպես հիմնական միջոց հաշվառվող թղթային կրիչով գրադարանային (անտիկվարիատ չճանաչված) գրքեր	20
		702	Որպես հիմնական միջոց հաշվառվող թղթային կրիչով դասագրքեր	5
		703	Որպես հիմնական միջոց հաշվառվող թղթային կրիչով մասնագիտական գրականություն	10
		704	Որպես հիմնական միջոց հաշվառվող արտահագուստ և այլ համանման հանդերձանք	3
		705	Պաշտպանական նշանակության և այլ անտառատնկարկներ	50

(հավելվածը փոփ. 20.07.21 N 380-Ն)

Հավելված 2
ՀՀ ֆինանսների նախարարի
2016 թ. հունվարի 8-ի
թիվ 3-Ն հրամանի

Ն Ո Ր Մ Ա Տ Ի Վ Ա Յ Ի Ն Օ Գ Տ Ա Կ Ա Ր Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ա Ն Ժ Ա Մ Կ Ե Տ Ն Ե Ր

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

Տեսակ		Օգտակար ծառայության ժամկետ (տարի)
800	Մրգատու ընդավոր և կորիզավոր տնկարկներ (բացառությամբ՝ կեռասենիների և ծիրանենիների)	15
801	Կեռասենիներ և ծիրանենիներ	20
802	Հատապտղային տնկարկներ (բացառությամբ՝ խաղողի այգիների)	10
803	Խաղողի այգիներ	40
804	Այլ բազմամյա տնկարկներ	20
805	Խոշոր եղջերավոր կենդանիներ	20
806	Մանր եղջերավոր կենդանիներ	15

809	Այլ կենդանիներ	10